ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

ՄԱՍՆԱԿԻ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Աբովյան համայնքի ավագանու մի շարք որոշումներնը մասնակի անվավեր ճանաչելու մասին Աբովյան համայնքի ավագանու որոշումների նախագծերը մշակվել են «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 38-րդ հոդվածի հիման վրա:

Իրավական ակտի ընդունման նպատակը և կարգավորման անհրաժեշտությունը.

ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության ընդհանուր բնույթի և ընտրական հանցագործությունների քննության վարչությունում քննվում է թիվ 58161220 քրեական գործը, որի շրջանակներում նախազգուշացվել ենք երկամյա ժամկետում հայցադիմում ներկայացնել դատարան Աբովյան քաղաքի թվով 45 կադաստրային ծածկագրերով հողատարածքների ապօրինի օտարման գործընթացի վերաբերյալ:

Համայնքապետարանի կողմից համապատասխան հայցեր են ներկայացվել ՀՀ վարչական դատարան: Հայցերը ներկայացված են Աբովյան համայնքի անունից՝ որպես հանրային իրավունքի իրավաբանական անձ, ընդդեմ Աբովյան համայնքի ղեկավարի և ավագանու /որպես իրավահաջորդների/՝ վարչական ակտերն անվավեր ճանաչելու պահանջի մասին /ներքոհիշյալ կադաստրային ծածկագրերով հողամասերի վերաբերյալ/.

07-002-0065-0068, 07-002-0065-0135, 07-002-0065-0153 **(07-002-0065-0149 /նախկին 07-002-0065-0128/ միացվել է 07-002-0065-0151 կադաստրային ծածկագրով հողամասին)**, 07-002-0065-0138, 07-002-0065-0049, 07-002-0065-0025, 07-002-0065-0072, 07-002-0065-0016, 07-002-0065-0077, 07-002-0065-0074, 07-002-0065-0080, 07-002-0065-0079, 07-002-0065-0065, 07-002-0065-0078, 07-002-0065-0038, 07-002-0065-0037, 07-002-0065-0076, 07-002-0065-0112, 07-002-0065-0122, 07-002-0065-0001, 07-002-0065-0121, 07-002-0065-0130, 07-002-0065-0145, 07-002-0065-0131, 07-002-0065-0039, 07-002-0065-0073, 07-002-0065-0088, 07-002-0065-0100, 07-002-0065-0167 (մասամբ), 07-002-0065-0101 (մասամբ), 07-002-0065-0114, 07-002-0065-0097, 07-002-0065-0022, 07-002-0065-0021, 07-002-0065-0013, 07-002-0065-0147, 07-002-0065-0129, 07-002-0065-0108 **(07-002-0065-0106 միացվել է 07-002-0065-0086 կադաստրային ծածկագրին), 07-002-0065-0144, 07-002-0065-0142 և 07-002-0065-0143 (նախկին 07-002-0065-0127 կադաստրային ծածկագիր),** 07-002-0065-0051, 07-002-0065-0091, 07-002-0065-0089, 07-002-0065-0015, 07-002-0065-0111, 07-002-0048-0055 (մասամբ), 07-002-0093-0037, 07-002-0116-0284, 07-002-0039-1268, 07-002-0065-0019, 07-002-0065-0020, 07-002-0065-0069, 07-002-0065-0134, 07-002-0065-0133, 07-002-0065-0132, 07-002-0065-0137, 07-002-0065-0139, 07-002-0065-0148, 07-002-0065-0152, 07-002-0065-0159, 07-002-0065-0158, 07-002-0065-0156, 07-002-0065-0164, 07-002-0065-0154, 07-002-0065-0160, 07-002-0065-0163, 07-002-0065-0162, 07-002-0065-0165, 07-002-0065-0155, 07-002-0065-0166, 07-002-0065-0161, 07-002-0065-0157:

ՀՀ վարչական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Աննա Դիլբարյանի, ուսումնասիրելով թիվ ՎԴ/6555/05/22 վարչական գործով Աբովյան համայնքի կողմից ներկայացված հայցադիմումն ընդդեմ Աբովյան համայնքի ղեկավարի, Աբովյան համայնքի ավագանու՝ վարչական ակտերն անվավեր ճանաչելու, այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտերը ոչ իրավաչափ ճանաչելու և հետևանքների վերացման ածանցյալ պահանջների մասին, 2022 թվականի հոկտեմբերի 31-ի որոշմամբ այն վերադարձրել է: Հայցադիմումը վերադարձվել է այն պատճառաբանությամբ, որ հայցվորի

կողմից վիճարկվող վարչական ակտերը կայացվել են տարբեր վարույթների շրջանակներում իրականացրած գործողությունների արդյունքում և տարբեր վարչական վարույթների արդյունքում ընդունված վարչական ակտերն անվավեր ճանաչելու պահանջները չեն կարող դիտվել որպես փոխկապակցված պահանջներ, անկախ այն հանգամանքից վիճարկվող վարչական ակտերը միանման են, թե ոչ, և նշված վարչական ակտերի իրավաչափության հարցը ենթակա է ստուգման առանձին-առանձին:

ՀՀ վարչական դատարանի 31.10.2022թ. հայցադիմումը վերադարձնելու մասին թիվ ՎԴ/6555/05/22 որոշման դեմ ներկայացվել էր վերաքննիչ բողոք, որը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 2022 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ ՎԴ/6555/05/22 որոշմամբ (դատավոր Կարեն Մաթևոսյան) մերժվել է՝ հայցադիմումը վերադարձնելու մասին ՀՀ վարչական դատարանի 31.10.2022թ. որոշումը թողնելով անփոփոխ:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 2022 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ ՎԴ/6555/05/22 որոշման դեմ ներկայացվել է վճռաբեկ բողոք:

Միաժամանակ թիվ ՎԴ/6555/05/22 գործով վերաքննիչ բողոքին զուգահեռ համայնքապետարանի կողմից հայցերը ներկայացվել են նաև առանձին-առանձին և գրեթե բոլոր հայցադիմումների ընդունումը մերժվել է: Բոլոր ստացված հայցադիմումների ընդունումները մերժելու մասին Վարչական դատարանի որոշումները բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ վարչական դատարան:

ՀՀ վարչական դատարանը /տարբեր դատավորների նախագահությամբ/ ուսումնասիրելով առանձին-առանձին կրկին ներկայացված հայցադիմումները, հայցադիմումների ընդունումը մերժել են, այն պատճառաբանությամբ, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի, 80-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի, 65-րդ հոդվածի, 67-րդ հոդվածի, 69-րդ հոդվածի վերլուծություններից հետևում է, որ վարչական դատարան կարող են դիմել նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինները կամ պաշտոնատար անձինք ընդդեմ վարչական մարմնի, եթե համարում են, որ այդ մարմնի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ խախտվել կամ անմիջականորեն կարող են խախտվել պետության կամ համայնքի այն իրավունքները, որոնց պաշտպանության լիազորությունը դրված է իրենց վրա, եթե այդ վեճը ենթակա չէ լուծման վերադասության կարգով, իսկ եթե նման հայցադիմում է ներկայացրել դրա իրավունքն ակնհայտորեն չունեցող պետական և տեղական ինքնակառավարման մարմինը կամ դրա պաշտոնատար անձը, ապա այդպիսի հայցադիմումի ընդունումը ենթակա է մերժման:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 65-րդ հոդվածով չբողոքարկված ոչ իրավաչափ վարչական ակտը կարող է անվավեր ճանաչվել **6 ամսվա** ընթացքում այն օրվանից, երբ իրավասու վարչական մարմինն իմացել է այն փաստերի մասին, որոնք վարչական ակտն անվավեր ճանաչելու հիմք կարող էին դառնալ, այսինքն՝ այդ դեպքում վարչական ակտը վերացվում է ոչ թե դատական, այլ հենց վարչական կարգով՝ նույն վարչական մարմնի կողմից, իսկ մյուս դեպքերում անհրաժեշտ է կա՛մ վերադաս մարմնի նախաձեռնությունը կա՛մ շահագրգիռ անձի կողմից վարչական բողոքի ներկայացումը կամ հայցի հարուցումը, որից հետևում է, որ հիշյալ բացառությունից բացի նույնիսկ նախադատական՝ վարչարարության վարույթում տվյալ վարչական ակտն ընդունած վարչական մարմինն իրավասու չէ ազդել այդ ակտի իրավական ճակատագրի վրա:

ՀՀ Վարչական դատարանը գտել է, որ համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի՝ ՀՀ Սահմանադրությանն ու օրենսդրությանը հակասող որոշումները վերացնելու կամ դրանք փոփոխելու իրավասությունն **օրենքով վերապահված է տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ հսկողություն իրականացնող մարմիններին**: Այսինքն՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի վերը նշված դրույթները համադրելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի վերոհիշյալ նորմերի հետ՝ ստացվում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-

րդ մասով սահմանված **հայցի հարուցման իրավասությունը պատկանում է տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ հսկողություն իրականացնող կոնկրետ մարմիններին:**

Միաժամանակ դատարանը եզրահանգել է, որ Աբովյան համայնքը հայցադիմում է ներկայացրել ընդդեմ Աբովյան համայնքի ղեկավարի և Աբովյան համայնքի ավագանու՝ խնդրելով անվավեր ճանաչել վարչական ակտերը, այսինքն՝ սույն գործով հայցը հարուցած վարչական մարմինը՝ հայցվորը, և պատասխանողը, ով էլ պետք է պատասխանի ըստ հայցի, նույն սուբյեկտն են՝ տեղական ինքնակառավարման նույն մարմինը, հետևաբար Աբովյան համայնքը հանդիսանում է հայցը հարուցելու իրավունքն ակնհայտորեն չունեցող անձը, քանի որ նա ըստ էության հայցը հարուցել է ինքն իր դեմ, որի դեպքում չի կարող առկա լինել որևէ վեճ և, ըստ այդմ էլ, հարուցվել հայց:

Նշված նախագծերը ներկայացվում են Ձեր քննարկմանը՝ որպես վարչական մարմնի իրավահաջորդ վերանայելու նախկինում ավագանու կողմից կայացված վարչական ակտերը և քննարկելու դրանց անվավերության հարցը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտն անվավեր է ճանաչվում իրավաստեղծ մարմնի, **դրա իրավահաջորդի** կամ համապատասխան լիազորություններով օժտված մարմնի ակտով, եթե ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը ընդունվել կամ գործել է՝ հակասելով ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտի:

Նույն հոդվածի 4-րդ հոդվածի համաձայն՝ իրավական ակտն անվավեր ճանաչելու մասին իրավական ակտով լուծվում են՝

1) նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչելու հետևանքով անձանց խախտված իրավունքները ճանաչելու կամ մինչև խախտումը եղած իրավական վիճակը վերականգնելու հարցերը.

2) անձանց իրավունքը խախտող կամ դրա խախտման համար վտանգ ստեղծող գործողությունները կասեցնելու կամ վերացնելու հարցերը.

3) անվավեր ճանաչված նորմատիվ իրավական ակտն ընդունելու և անվավեր ճանաչելու հետևանքով պատճառված վնասները հատուցելու հարցերը:

Իսկ նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ իրավական ակտն անվավեր ճանաչվելու դեպքում ֆիզիկական կամ իրավաբանական անձինք պարտավոր չեն անվավեր ճանաչված նորմատիվ իրավական ակտի հիման վրա իրենց տրամադրված իրավունքներից, ազատություններից, արտոնություններից օգտվելու հետևանքով պետությանը կամ համայնքին պատճառած վնասները հատուցել կամ վերականգնել:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 65-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն չբողոքարկված ոչ իրավաչափ վարչական ակտը կարող է անվավեր ճանաչվել 6 ամսվա ընթացքում այն օրվանից, երբ իրավասու վարչական մարմինն իմացել է այն փաստերի մասին, որոնք վարչական ակտն անվավեր ճանաչելու հիմք կարող էին դառնալ:

Մինչդեռ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական ակտն անվիճարկելի է դառնում, և վարչական մարմինը զրկվում է սույն հոդվածով նախատեսված իրավունքից, եթե վարչական ակտի ընդունման օրվանից անցել է 10 տարի:

Բացի այդ՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 7-րդ հոդվածի համաձայն վարչական մարմիններին արգելվում է անհավասար մոտեցում ցուցաբերել միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ, եթե առկա չէ դրանց տարբերակման որևէ հիմք: Վարչական մարմինները պարտավոր են անհատական մոտեցում ցուցաբերել էապես տարբեր փաստական հանգամանքների նկատմամբ:

Տվյալ դեպքում վերը նշված թվով 45 կադաստրային ծածկագրերով հողատարածքներն ըստ «ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան քաղաքային համայնքի (բնակավայրերի) գլխավոր հատակագիծը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 09.08.2007 թվականի N 1036-Ն որոշման հանդիսանում են նույն նպատակային նշանակության անբաժանելի անշարժ գույքի

օբյեկտ, նույն տարածքում գտնվող հող, այնէ՝ միասնական տարածական ամբողջություն կազմող զբոսայգի (Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված՝ օտարման ոչ ենթակա հողամաս), ուստի պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ մասնատման դեպքում այն կկորցնի իր նպատակային նշանակությունը:

Որպես վարչական մարմնի իրավահաջորդ Աբովյան համայնքի նախկին ավագանու որոշումները ներկայումս վերանայելիս անհրաժեշտ է քննարկել ոչ միայն դրանց անվավերության, այլև անվավերության հետևանքների կիրառման հարցը:

Վարչական ակտեր կայացնելուց մինչ օրս անցած ժամանակահատվածում վեճի առարկա հանդիսացող հողատարածքներից մեծ մասը օտարվել են բարեխիղճ ձեռք բերողների /կան դեպքեր մի քանի անգամ/, գրավադրվել են բանկերում, գրեթե բոլորը կառուցապատվել են և անվավեր ճանաչելուց վարչական մարմինը պարտավոր է լուծել նաև իրավական ակտն անվավեր ճանաչելու հետևանքով անձանց խախտված իրավունքները ճանաչելու կամ մինչև խախտումը եղած իրավական վիճակը վերականգնելու հարցերը, անձանց իրավունքը խախտող կամ դրա խախտման համար վտանգ ստեղծող գործողությունները կասեցնելու կամ վերացնելու հարցերը, անվավեր ճանաչված նորմատիվ իրավական ակտն ընդունելու և անվավեր ճանաչելու հետևանքով պատճառված վնասները հատուցելու հարցերը, որի պարագայում կարող են խախտվել բազմաթիվ անձնանց իրավունքներն ու օրինական շահերը:

Բացի այդ՝ արդյունքում համայնքը նույնպես կարող է կրել էական վնասներ:

Այսպես՝ վերը նշված 45 կադաստրային ծածկագրերով /որոնցից 3-ն են չկառուցապատված/ անշարժ գույքերի միայն շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը կազմել է մոտավոր 264.000.000 ՀՀ դրամ: Իսկ վերանայման արդյունքում պետք է վերականգնվեն նաև բարեխիղճ ձեռք բերողների կրած վնասները, այսինքն յուրաքանչյուրի առուծախի պայմանագրերում նշված արժեքները և այլ կրած վնասները, որի պարագայում համայնքը կկրի շատ ավելի մեծ չափերի նյութական ծախս:

Ձեր քննարկմանն է ներկայացվել թվով 45 կադաստրային ծածկագրերով հողատարածքներից թվով 16 կադաստրային ծածկագրերով հողամասերի մասով ավագանու որոշման նախագիծ, քանի որ մնացած ծածկագրերով հողամասերի օտարման հիմքը հանդիսացել են ոչ թե ավագանու, այլ համայնքի ղեկավարի իրավական ակտերը:

Իրավական ակտի ընդունման պարագայում այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտության մասին.

Նախագծի ընդունման պարագայում առաջանալու է համայնքի ղեկավարի մի շարք իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն, որոնց արդյունքում կխախտվեն բազմաթիվ քաղաքացիների իրավունքներ:

Իրավական ակտի ընդունման կապակցությամբ բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացման կամ նվազեցման մասին.

Նախագծի ընդունման կապակցությամբ համայնքի բյուջեում եկամուտները կպակասեն անշարժ գույքի հարկի գումարների չափով, իսկ ծախսերի մասով համայնքի նկատմամբ կառաջանա քաղաքացիների վնասի հատուցման առանձնապես խոշոր չափի ծախս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ